



Հանձնաժողովի՝ ընտրողների գրանցումն իրականացնող անդամի գործառույթները

- ▶ Ընտրողին խնդրե՛ք ներկայացնել Վրաստանի քաղաքացու ինքնությունը հավաստող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը,
- ▶ Ստուգե՛ք, թե ընդգրկված է արդյոք ընտրողը ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակի մեջ, և համեմատե՛ք ընտրողի անձնական համարը ընտրողների ցուցակում ամկա համարի հետ:
- ▶ Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում ամկա ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակում ընդգրկված տվյալների համապատասխանությունը:
- ▶ Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում և ընտրողների ցուցակում ամկա լուսանկարների և ընտրողի դեմքի իրար հետ համապատասխանությունը: Եթե ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում ամկա լուսանկարները միմյանց անհամապատասխան համարեք, տվյալ անհամապատասխանության հաստատման հարցով դիմե՛ք հանձնաժողովի նախագահին և սպասե՛ք նրա ցուցումներին: Եթե հանձնաժողովի նախագահը չի հաստատի անհամապատասխանությունը, իրավունք ունեք գործավարության մատչանում նշելու Ձեր առանձնահատուկ կարծիքը, ինչը հանձնաժողովի քարտուղարի հետ հաստատում եք ստորագրությամբ:
- ▶ Համապատասխանության հաստատման դեպքում (ընտրողների համապատասխան ցուցակում Վրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ, ամբողջությամբ համապատասխանում են ցուցակում ամկա տվյալներից (անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվը, հասցեն) գոնե երեքը, ընտրողին արե՛ք նշմարում այ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգի վրա, եթե տվյալ գործողության կատարումն անհնար է՝ այ ձեռքի մյուս մատների վրա, եթե դա ևս անհնար է, նույն կարգով՝ ձախ ձեռքի վրա:
- ▶ Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չի տրամադրվում քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:
- ▶ Ստորագրե՛ք է ընտրողների միասնական ցուցակի համապատասխան սյունակում, ընտրողի ազգանվան երկայնքով:
- ▶ Խնդրե՛ք ընտրողին ընտրացուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հաստատել քվեաթերթիկ/քվեաթերթիկներ ստանալը: Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ցուցում տաք ստորագրելու նույն սյունակում: Միևնույն ժամանակ, նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրեք (ընտրողի անվան և ազգանվան մատնանշմամբ):
- ▶ Քվեաթերթիկ/քվեաթերթիկներ տրամադրելիս ստորագրե՛ք դրա/դրանց դարձերեսին համապատասխան սյունակում և հաստատե՛ք գրանցում իրականացնողի կնիքով (նույնպես դարձերեսին):
- ▶ Ընտրողին փոխանցե՛ք Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկները:
- ▶ Եթե Դուք կամ ընտրողը վնասեք ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկները, այդ մասին անհապաղ տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին և ընտրողին փոխանցե՛ք նոր (Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված) ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ:
- ▶ Ուղղորդե՛ք ընտրողին դեպի քվեախցիկ:

ՆԿԱՏԻ՝ ՈՒՆԵՑԵՔ

- ✓ Այն ընտրողը, որը ֆիզիկական վիճակի, մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ընթացակարգը: Ընտրողին ընտրական քվեաթերթիկ/քվեաթերթիկներ փոխանցելիս՝ ընտրողների միասնական ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում պետք է անեք «ֆիզիկական վիճակ» գրառումը և հաստատե՞ք ստորագրությամբ:
- ✓ Երաշխավորվում է, որ ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին, 17:00-ին և 20:00, առանց քվեարկության գործընթացին խանգարելու, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ վերահաշվեք ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների, Ձեր կողմից տրված ընտրական քվեաթերթիկների քանակները և հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված քվեաթերթիկների քանակը և տվյալները տեղեկացնեք հանձնաժողովի նախագահին: Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, անհապաղորեն պետք է բացատրագիր գրեք, պատճառի մատնանշմամբ, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/ արձանագրություններին: Քվեարկությունն ավարտվելուց հետո, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, կրկին պետք է վերստուգեք տվյալների ճշգրտությունը:
- ✓ Ընտրողների գրանցում իրականացնողի գործառույթի ժամանակավոր փոխանցման դեպքում, պարտավոր եք կրկին հաշվել ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների և Ձեր կողմից հատկացված ընտրական քվեաթերթիկների քանակությունները (ներառյալ հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված ընտրական քվեաթերթիկների քանակը) և արդյունքների մասին տեղեկացնել հանձնաժողովի նախագահին: Տվյալների միջև տարբերության հայտնաբերման դեպքում, անհապաղորեն պետք է բացատրագիր գրեք, պատճառի մատնանշմամբ, որը կկցվի քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությանը/արձանագրություններին: